

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Маскъ».
Կամ Tiflis. Rédaction «Maschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաջ օրերէն):

Հայտարարութիւնները ընդունուած են ամեն լիզուով:

Հայտարարութիւնները համար վճարուած են
իւրաքանչիւր ըստ 2 կոպէկի:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄԱՍԿ“

ԴՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակուած է Թիֆլիսում, նոյն դիւրով և նոյն պրոպրիետարով: Մեր ստանուած են սեփական
ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:
«ՄԱՍԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսեկանը 6 ռուբլ:
Գրվել «ՄԱՍԿ» կարելի է ԽՐԱՎԱՆԱՎԱՆՆԵՐ (Բարձրագոյն և Բարձրագոյն փողոցների ան-
կիւնում, Թամարիսի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄԱՍԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МАСКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MACHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ վերին-Ազովի-
սից. Նամակ Նոր-Բայազետից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւ-
րաց Հայաստանից. Նամակ Թիւրքիայից. Արտա-
քին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—
ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ՖԵԼԵՏՈՆ.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Մայիսի 12-ին

Մեր փոքրիկ Ազովիսում կան եօթն գեղեցի-
կաշէն և մեծադիր եկեղեցիներ, որոնցից Ս. Քրիս-
տափոր անուանով եկեղեցին առաւել նշանաւոր է
նրանով, որ ամենից բազմաթիւ և հարուստ
ծուխը նրան է պատկանում: Այդ եկեղեցին մի

ՖԵԼԵՏՈՆ

Բաֆֆիի թաղումը.— Հասարակական աղէտ.—
Անընդհատ անձրեւներ.— Ջրհեղեղի երկրորդ.— Նո-
յի տապանը և իմ ֆելիետոնական տապան.—
Ովքեր կը լինեն տապանուած.— Ջրերի պակասե-
լը և Արարատի ստորոտից եկած երկու հիւրերը.—
Հաստ ծրարը.— Խաբամբ ուրախութիւն.— Ու-
ղեղն Գէորգ Աբրահամեանը.— Երկու խօսք Գէորգ
Եւստրակեանցին.

Ապրիլի 29-ին հայ հասարակութիւնը թաղում
էր Բաֆֆիին: Այն օրը սկսեց անձրեւ տեղալ և
անձրեւի գալը, զրեթէ անընդհատ կերպով, շարու-
նակից մօտ երեք շաբաթ...

Բաֆֆիի մահը արդէն մի աղէտ էր հայոց հա-
սարակութեան համար, իսկ անձրեւի անընդհատ
տեղալը կարող էր մի երկրորդ աղէտ լինել մեզ
համար, մանաւանդ ժողովրդի աղքատ դասակար-
գի համար: Եւ ճշմարիտ, բաւական մարդիկ վե-
նասվեցան, խեղդվեցան ջրի մէջ, բազմաթիւ
փոքրիկ անեղ, խրճիթներ փլվեցան, քանդվեցան,
շատերը չունեւորներից զրկվեցան իրանց վերջին
ունեցածից:

Անձրեւի անդադար գալը սպառնում էր ընդհա-
նուր ջրհեղեղ առաջ բերելու... Այդ սարսափելի
երեք շաբաթվայ ընթացքում բազմաթիւ էին լի-
նում, երբ եւ համոզված էի թէ ջրհեղեղ կը լինի,
նման այն ջրհեղեղին, երբ Նոյ նահապետը տա-
պան կառուցանելով, աղտոտեց հեղեղից, իսկ երբ
ջրերը սկսեցին պակասել՝ նա իր տապանով կանգ
առաւ: Արարատ սարի գագաթի վրա եւ եւ ար-
դէն մտածում էի ձեռնամուկ լինել տապանի
կառուցանելուն:

Ի հարկէ իմ տապանը կը լինէր մի ֆելիետո-

նանի տարի է արդէն, որ դուրս է սեփական քա-
նանայից. նրա ծուխը երկար ժամանակ է, որ
աշխատում է սեփական քանանայ ունենալ: Եր-
կար ու բարակ խօսակցութիւններից և դատողու-
թիւններից յետո՛ւ մի տարի առաջ քանանայա-
ցուի ընտրութիւն է կատարվել, բայց բոլորովին
անաշուղ: Ամեն օր կը լսէք հասարակութեան
մէջ արտունջ, որ իրանց քանանաները և տիրա-
ցունները տղէտ են, կոպիտ են, երկուսն են շատ
անախորժ և անտանելի ձայնով, թէ այդ է
պատճառը, որ իրանք—ժողովուրդը դարձել են
չափազանց անտարբեր դէպի եկեղեցին և թէ
հարկաւոր է աւելի կրթված և ժողովրդի բարո-
յական կարիքներին բաւականութիւն տուող՝ ան-
ձն ունենալ քանանայ և այլն և այլն: Սակայն
այսպիսի դատողութիւններ տուող պարտները չը
զիտեմք ինչ մի կողմնակի աղեղնութեան են-
թարկվելով՝ ընտրել են քանանայացու մի տիրա-
ցուն, որը, որքան մեզ յայտնի է, ոչ «մի կարգին

նական տապան: Եւ ինչպէս Նոյը ապաստանեց
իր տապանում թէ իր ընտանիքը և թէ ամենա-
օգտաւէտ կենդանիներից երկու երկու հատ, որ-
պէս զի հեղեղը վերջնապէս յետոյ նրանց սե-
րունդը կորած չը լինէր մարդկութեան համար,—
այնպէս էլ եւ իմ ֆելիետոնական տապանում
պէտք է, ի հարկէ, ապաստանելի այնպիսի նախա-
ջրհեղեղեան անձանց, որոնց կորուստը շատ
զգալի կը լինէր հայութեան համար հեղեղի վեր-
ջնապէս յետոյ:

Նախ եւ պէտք է մտածել այն նիւթերի մասին,
որոնք անհրաժեշտ են տապանը կառուցանելու
համար և վճռել էի Սօղանուլի անտառների
փայտից մի քանի կտորներ խնդրելու, բայց վերջն
իմացայ թէ ճանապարհները անձրեւի պատճառով
այն աստիճան փակցել էին, որ այդ անտառի
փայտից օգտվել անհնարին էր դարձել: Մնում
էր ինձ, ուրեմն, իմ տապանս ուրիշ նիւթերից չի-
նել. վճռեցի «Մշակի» հին համարներից կառու-
ցանել տապանս, իսկ եթէ չէր բաւականանայ,
այն ժամանակ պէտք է դիմէի ազգին, խնդրելով
որ ինձ ամեն տեղից ուղարկեն «Արարատ» ամսա-
գրի տնտարակները, քանի որ գիտեմ որ «Արա-
րատը» ոչ ոքին հարկաւոր չէ, ամեն տեղ զօրով
է ուղարկվում և ամեն տան ու դպրոցի մէջ ըն-
կած են նրա բազմաթիւ օրինակները, առանց
երեք կարգացած լինելու:

Տապանս կառուցանելուց յետոյ, պէտք է մը-
տածել թէ ում պէտք է զետեղել այդ տապա-
նում, ինչ տեսակ տիպեր ու անձնաւորութիւն-
ներ պէտք է ապաստանելի նրա մէջ, որպէս զի
հեղեղի վերջնապէս յետոյ նրանց պէս թանգա-
ղին անձնաւորութիւններն ու օգտաւէտ գործիչ-
ները կորած չը լինեն ամբողջ մարդկութեան
համար:

Նախ պէտք է տապանումս ապաստանելի Գե-
որգ Աբրահամեանին, որպէս հայոց եկեղեցական օ-

կրթութիւն: Եւ ստացել և ոչ էլ «ժողովրդի բա-
րոյական կարիքներին բաւականութիւն տուող
կարող է լինել, թէ և կարողա՛գրել և մեզ՝ դուք-
րիս հետ վարվելու եղանակը՝ լաւ գիտէ... Ար-
դէն մի տարի կայ, որ հասարակութիւնը այդ
տիրացուն քանանայ ձեռնադրել տալու համար
խնդիր է առել ուր հարկն է, սակայն մինչև այ-
ժմ բարեբաղդաբար այդ խնդրին բաւականու-
թիւն չէ տրվել: Բարեբաղդաբար ենք ասում այն
պատճառով, որովհետեւ Ս. Քրիստափոր եկեղեցու
ծուխից շատերը դեռ այժմ են գլխի ընկել և
ընդդէմ են այդ ընտրութեանը, թէ և կային մի
քանի անձինք, որոնք հէնց սկզբից այդ ընտրու-
թիւնը սխալ համարելով՝ համաձայն չէին: Դժ-
գոհների թիւը այժմ աւելի շատացել է, նրանք
աշխատում են համոզեցնել ժողովրդի մնացեալ
մասին էլ, որ ուրիշ մի աւելի պիտանացու մարդ
ընտրվի քանանայութեան, դուք է այդ աշուղի նը-
րանց, միայն մենք մեր կողմից այսքանը կաւե-
լացնենք, քանի որ ըստ սովորութեան երկուս
ուսումնարանների կրօնուսուցը լինում է միշտ ու
Քրիստափոր եկեղեցու քանանան, այդ պատճա-
ռով էլ աւելի հարկաւոր է աշխատել, որ այդ ե-
կեղեցու քանանայացուն անպատճառ ուսում ա-
ռած և փողը ի շատէ կրթված մի անձ լինի:
Ոչտք է փոքր ինչ էլ իղձալ ուսումնարանների
փոքրահասակ աշակերտներին... Կրօնի դասա-
տուութիւնը մշտապէս յանձնել մի անուսում տի-
րացուն և դրանով շնորհիւ թէ մանուկներին և
թէ նոյն իսկ առարկային—որի յարգը օրից օր
աւելի է ընկնում մեր ուսումնարաններում—հա-
զիւ թէ ներքին լինի մի այնպիսի հասարակու-
թեան, որպիսին Ազովիսին է: Սակայն պէտք է
յուսալ, որ աղուլեցիք այդպիսի սխալ չեն անի
այս կամ այն մարդուն նիւթապէս ապահովեցնե-
լու համար:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Մայիսի 18-ին

Նոր-Բայազետ քաղաքը առողջապահական կող-
մից դանդաղ է աննախանձելի դրութեան մէջ:
Մի կողմ թողնելով այն բոլորը, ինչ որ պահան-
ջում է առողջապահութիւնը, առաջիմ բաւակա-
նանքը յիշելով, որ ամբողջ քաղաքը բաղկանա-
լով 1,200 տուն բնակիչներից (ուրեմն մօտ 7,000
հոգի բնակիչից), չունէ դռնէ մի հատ բաղնիք,
որտեղ կարողանար ժողովուրդը յաճախ երթեկել
և մաքրութիւնը ժողովրդի համար սովորութիւն
դառնար: Եթէ Նոր-Բայազետ քաղաքը առողջա-
բար օդը և մաքուր ջուրը չունենար, այն ժամա-
նակ կառավարանային Նոր-Բայազետում զանազան
տեսակ տարափոխիկ հիւանդութիւններ: Սրանից
երկու տարի առաջ քաղաքացիների մէջ մի բարի
միտք յղացաւ, այն է, որ տեղիս երկսեռ ուսում-
նարանի պատրաստի ունեցած դրամազխով մի
բաղնիք շինվի, որի արդիւնքը սեփականութիւն
լինի նոյն երկսեռ ուսումնարանի: Բայց դժբաղ-
դաբար այդ միտքը չիրագործվեց, թէպէտ հոգե-
ւոր իշխանութիւնից յիշեալ նպատակով այդ
դրամազխով ծախսելու համար շատ վաղուց
թոյլտուութիւն էր ստացվել: Բայց ըստ յարգելի
հոգաբարձութեան կողմից, որին յանձնված էր
այդ գործին կատարումն տալը, մինչև այժմ ոչ մի
կարգադրութիւն չէ եղել:

Յուսով ենք, որ մեր հոգաբարձութիւնը, ինչ-
պէս չը զրացաւ նորոգել տեղիս երկսեռ ուսում-
նարանի հին շինութիւնը, որին ամեն մի բոլէ վը-
տանդ էր սպառնում, և հիմա իր շքեղութեամբ
Նոր-Բայազետում համարեա առաջին է, նոյնպէս
կիրաւորելով Նոր-Բայազետում ուսումնարանապատ-
կան դրամազխով բաղնիքի կառուցումը, որը
անշուշտ կաւեղանի ուսումնարանի նիւթական
արդիւնքները, ստեղծելով նրա համար եկա-

քուն հեղինակը, տապանիս մէջ պէտք է ապաս-
տանում այնպիսի հաղադրու հայ հոգեւորականե-
րի մի քանի թանգաղին նմուշներ, որոնք իղէալն
է եկեղեցի առանց ժողովրդի, որոնք առանց
բաշխելու ու կարեւորութեան պարզ յայտնում են այն
միտքը թէ՛ ժողովուրդը, ազգը իրանք դր օշի
տեղ չեն դնում և շատ լաւ կարող են օճա
գնալ առանց այդ արհամարհելի ազգի:

Բայց տապանս արդէն լցվում էր, ջուրն էլ
հետզհետէ աւելանում, բարձրանում էր, անձրեւն
էլ անդադար գալիս էր ու դալիս... հարկաւոր
էր շտապել էլի մի քանի հազուադրու և թանգա-
ղին տիպեր ապաստանել տապանիս մէջ, որպէս
զի չը կորչեն ապագայ սերունդի համար:

Ի հարկէ տապանիս մէջ պէտք է մտնէին մի
մի հատ քանանայ ձեռնադրվող տղէտ տիրացու-
ներից, մի մի հատ հայ վաշխաւորներից և ի-
րանց բանտարեւորող մի մի հատ
հայ տէրերից, աշակերտներին ծեծող մի մի հատ
օրինակելի վարժապետներից, ազգային փողերը
ուսուող հայ դպրոցների մի մի հատ հոգաբարձու-
ներից, հայոց լեզու աղաւաղող մի մի հատ հայ
հեղինակներից և այլն, և այլն, և այլն...

Բայց երբ որ ամեն բան արդէն պատրաստ էր,
—յանկարծ անձրեւները դադարեցին, ջրերը պա-
կասեցին և տապանիս կառուցումը, ի հարկէ,
աւելորդ դարձաւ:

Ջրերի պակասելուն պէս, ճանապարհները մա-
քրվեցան, հաղորդակցութիւնը վերականգնվեց և
ահա նորից վերահաստատվեցաւ ճանապարհորդ-
ների երթեկութիւնը Թիֆլիսի և Արարատ սարի
կողմերի երկիրներին մէջ: Եւ ահա ճանապարհների
բաշխվումն պէս եկան մեզ մօտ Արարատի ստո-
րոտից երկու թանգաղին հիւրեր՝ Մամբրէ կպիս-
կապուրը և պ. Սեդրակ Մանդինեան:

դի ունեցեր է Մշոյ Հայոց և Հռոմէականաց միջև հետեւեալ պարագայից մէջ։ Մշոյ գիւղերէ միւսն մէջ փոքր մասաւ մը կը գտնուի, որ նոյն գիւղի հռոմէականութիւնը ընդունող հայոց ձեռքն անցեր է։ Այս վերջինը ուղիք են այդ մասաւուն ի հիմանէ նորոգել և ընդարձակելը Հայերն իմացեր են զայս, և որովհետեւ կրօնափոխը կը զրկէին վայելելէ այն ազգային և նուիրական հաստատութիւններն զորս ունեցած են իրենց նախկին կրօնին մէջ, այս սկզբամբ արգիւնք են մատրան վերաշինութիւնը։ Հռոմէականը յաջողի ին սակայն հրամանագիր մը բերել տալ Պօլսէն, ինչպէս նաև բարերար հռոմէական մը դատի են, որ յանձն առեր է վճարել չինութեան ծախքն և սկսեր են մատուցել քանդելու Հայերը վրայ հասնելով արդիւնք են այդ գործողութիւնն, որով կրիւ և զանազանութիւնը տեղի ունեցեր են Հայոց ու Հռոմէականաց միջև և բաւական անձինք բանտարկուի են։ Համարուի այդ պահուն Մուշէն մեկնած լինելով խնդրոյն հետեւեալ վրայ տեղեկութիւն չունի։ Միւս կողմէ, ստոյգ աղբիւրէ կը տեղեկանանք թէ Մշոյ առաջնորդական տեղապահն, անցեալ շաբաթ օր, 7 մայիս, հեռագիր մը ուղղելով յԱզգային Պատրիարքարան հաղորդած է այս դէպքն և Պատրիարքարանն, այս մասին պարտաւարտապէս ի գործ դնելու համար աւելի մանրամասնութեանց պէտք զգալով որ կը պակսէր Մշոյ առաջնորդական տեղապահին հեռագրոյն մէջ, հեռագրու աւելի ընդարձակ տեղեկութիւն ուղած է Ն. Արժանապատուութիւնէն։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՍԻՑ

Կ. Պօլսի, 14 մայիսի

Ամեն մատառնութիւն կենտրոնացած է այս րօպէիս վանի և Մուշի վրայ։ Սակայն մինչև այս րօպէիս այ մասնաւոր լուր մը չը կայ այդ երկու քաղաքներէն։ Ասիական թղթատարն եկաւ, սակայն նամակները բաժնելու դեռ մի ժամ կայ, և Պատրիարք թղթատարը կը մեկնի քառորդէ մը, հետեւեալ կարելի չը պիտի լինի այսօր հասնել այն լուրերն, զոր պիտի ստանանք մի ժամ վերջ։ Մուշի հռոմէական հայոց առաջնորդին դէմ եղած սպանութեան փորձին շարժառիթներուն վրայ ալ ո՛ր և է նոր բան մը չը կայ մինչև այս ժամուս, նամակներէ պիտի տեղեկանանք։ Միայն թէ հեռագիրը կը հաղորդէ թէ վերաւորեալ լուս վիճակի մէջ է։ Այդ առաջնորդը շատ կարող մարդ մ'է, խելօք, բանիւրուն, իւր պաշտօնին յարմար և Ազարեան Պատրիարքը կը զուգորդայ նորա վրայ։ Սակայն վերին աստիճանի հայատեաց է, ուր որ գտնուած է անհայտ թշնամի հանդիսացած է ամէն այն հայոց, որը հռոմէական չին, կաթօղիկութեան շահերու ի պաշտպանութիւն չարաչար կուգէ մեռանք հայոց։ Արապկեր եղած ժամանակն ալ հետեւած է այս քաղաքականութեան և օր մը դարձեալ վրան հրացան պարպած են, բայց վերստին ազատած է։

Ազարեան Պատրիարք իւր թերթերուն խմբագիրները կանչելով—«Հէրիդէի Շարդի» և «Մէճմուայի Ալպար», պատուիրած է, որ զգուշ ընթացք մը բռնեն. խոհեմութիւնը ձեռքէ չը ձգեն, և տեղի չը տան հայոց վերջին աստիճանի զբոսը։ «Մէճմուայի Ալպար» իսկզբան կրակը բորբոքելու նպատակաւ յօդուածներ գրեց, բայց «Արեւել» զնա այնպէս մը ջանքսնեց, որ սարսափահար եղաւ. և Ազարեան Պատրիարք ստիպուեցաւ հրատարակել թէ «Մէճմուայ» իւր օրգանը չէ, թէպէտև յայտնի է թէ իւր օրգանն է։

Իսկ մեր վիճակն ալ միշտ տարրած է։ Անցեալ շաբաթէն ի վեր յոյս կար թէ՛ տաճկաց Պալատին վերջ պիտի վաւերացուի Գարուիւն Պատրիարքի Նրոստաղէմի պատրիարքական ընտրութիւնը, որով պիտի ազատուէր այդ աղէտաբեր անձէն. սակայն այսօր բաւական վստահելի աղբիւրէ կը հաղորդուի ինձ թէ Գարուիւն Պատրիարքը, Պօլսոյ Պատրիարք մնալու համար տրուած բարձրագոյն որոշումը հաստատ պիտի մնայ։

Եկեղեցականը սկսած են շարժիլ եկեղեցական Համագումար ժողովը դուրսբերու. համար ինչ որ ըրին, Պատրիարքը չուզեց դուրսել այդ ժողովն, սակայն այժմ կրօնական ժողովը հրաժարած լինելով, նոր կրօնական ժողով մը ընտրելու համար անհրաժեշտ է եկեղեցական համագումար ժողովը դուրսբերել։ Այդ նպատակաւ երկուշաբթի օր, մայիսի 16-ին, եկեղեցականը պաշտօնապէս առաջարկ պիտի մատուցանեն Պատրիարքին Ան-

գամ մը որ եկեղեցական Համագումար ժողովը դուրսբերի, եկեղեցականը պատրաստ են ըլլիլ-ըլլիլ ընել այն Պատրիարքը, որ իւր աթոռին վրայ տարաբաղաւոր կը մնայ անսասան։

Ջանադան կողմերէ նամակներ եկած են Պատրիարքին այնքան նախառական, այնքան դառն ճշմարտութիւններով լեցուած, որ ինքն ալ ծայրապէս վշտացեր է։ Բայց միշտ կը մնայ աթոռին վրայ։ Եթէ այդ մարդը քիչ մը խիղճ ունենար ձէվընթ փաշայի տուած հրաժարականի վերջ ալ ևս չէր վերադառնար։

Մայիսի 20 ուրբաթ օրն ալ հաւանորէն Ազգ. ժողովն ալ պիտի դուրսբերի երեսփոխանը ալ բաւական կարևոր խորհուրդներ ունին Պատրիարքի նկատմամբ։

Իսկ եթէ այս ամէնը չը յաջողի, այն ատեն եկեղեցականները կը սկսին չը յիշուի, չը յիշուի» որոտաւ։

Պատրիարքարան հասած են զանազան ցաւալի լուրեր, մասնաւորապէս Ամասիայէն, սակայն Պատրիարքը նամակները դրպանը կը պահէ, և ինչ ինչ փաղաքական ժողովականներուն ցոյց կուտայ, ոչ պարիարքարանի դիւանապետներուն կը վախճայ թէ ժողովականը թոյլ բերան կը գտնուի, կենդին մարդու կրտսին։

Անս սահմանադրական Պատրիարքը։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թէ Բերլինից և թէ Վիեննայից եկած լուրերը ցոյց են տալիս, որ գերմանական և աւստրիական պետութիւնները բարեկամական յարաբերութիւնները աւելի սերտ են դառնում, և այդ երկու պետութիւնները միասին կը գործեն արտաքին քաղաքականութեան վերաբերեալ բոլոր հարցերում։

—Փարիզում լուրեր են պտտում, որ Ֆրէյսինէ պէտք է նշանակիլ Լոնդոնի Ֆրանսիական դեսպան։

—Ինչպէս հեռագրում են Կ. Պօլսից, Մուլթանը յայտնել է իր դժգոհութիւնը Ֆրանսիաների միջնորդին այն պատճառով, որ թիւրք աստիճանաւորներին ռոճիկ չէ արվում կանոնաւորապէս։ Միևնուրեք յայտնել է, որ այդ անհաճոյ երևոյթը առաջ է դալիս այն ֆրանսական մեծ ճնշմամբ, որի մէջ գտնվում է օսմանեան պետութեան զանձարանը։

—Եթեմուկայի սահմանադրութիւնը լրագրելը խօսելով Մալմիսիկի նոր երկաթուղու մասին, այն միտքն է յայտնում, որ Աւստրիան ձգտում է անպատճառ ձեռք գցել Մալմիսիկին։

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երբ գնեալով Բուլանթէ գնաց Վալանսիէն, նորա առաջ գործը եկան աղջիկներ, սպիտակ ներգուտով, նրանցից մէկը, մի շատ գեղեցիկ օրիորդ, մօտեցաւ գնեալին և ասեց, «համբուրեցե՛ք ինձ, ես խնամարկում եմ ձեր առաջ»։ Բուլանթէ երկուքը ապաստեց, և կատարեց օրիորդի առաջարկութիւնը։ Ներկայ եղողները մէջ, որոնց կարծիքով այդ չքաղաքական համարը շատ երկար տեցաւ, գտնվում էր և օրիորդի փեսացուն։ Այդ փեսացուն, որ քաղաքի յայտնի անձինքնէն էր, կատարեց իր պարտքը չարտեց օրիորդի վրա նշանադրութեան ժամանակն, և յայտնեց որ չէ կամենում ամուսնանալ այն օրիորդի հետ, որին համբուրում է ուրիշը։

Գայտիի որ աղբիւրի ջուրը աւելի առողջ է խմելու համար, քան թէ դետի ջուրը, քանի որ այդ վերջինը միշտ իր մէջ պարունակում է բազմաթիւ մանր, անտեսանելի օրգանիզմներ (փոքրիկ կենդանիներ, միկրօօրգանիզմներ)։ Նորիւրում Պրոսկաւաէն և Պաղդէ բժիշկները հետազոտելով Բերլինի միջով անցնող Շարդի գետի ջուրը, ապացուցին որ այդ գետի ջուրը պարունակում է իւրաքանչիւր կուբիկսանի սենտիմետրում 4,000-ից աւելի միկրօօրգանիզմներ։ Միայն համեմելով արուստական կերպով չինված մեծ աւազանին, Շարդի գետի ջուրը այդտեղ քաղերից և աւազից պարտաւարտ արուստական ֆիլտրի միջով մաքրվելով պիտանի է դառնում խմելու համար, քանի որ այդ անաղին ֆիլտրից, այդ արուստական ծովակից ջուրը զարեց յետոյ Շարդի ջրի իւրաքանչիւր կուբիկսանի սենտիմետրը այլ ևս ոչ 4,000, այլ միայն 30, շատ-շատ 40 միկրօօրգանիզմ է պարունակում իր մէջ։ Դա արդէն համարվում է խմելու համար պիտանի ջուր, որովհետև գետի ջուրը երբեք չէ կարելի կատարելապէս մաքրել բոլոր միկրօօրգանիզմներին և հասցնել նրան աղբիւրի ջրի մաքրութեան աստիճանին։

«Nord. Allg. Zeit.» լրագիրը հրատարակեց մի յօդուած գերմանացիների թիւի մասին Գերմանիայում և արտասահմանում։ Բուն Գերմանիայում գերմանացիների թիւը 47,750,000 է, որոնց թիւում ոչ-գերմանացիները 31/2 միլիոն են։ Հետաքրքիրն այն է, որ արտասահմանում ապրող գերմանացիների թիւը համարեա հաւասար է Գերմանիայում ապրող օտարազգիների թիւին, այսինքն 31/2 միլիոն։ Ուրիշ պետութիւններում գերմանացիները ընդ իստող աղբիւրը հաշուում են 12 1/2 միլիոն։ Այդպիսով ամբողջ գերմանացիների թիւը 60 1/4 միլիոն է, որոնցից 3/4-ը ապրում է Գերմանիայի սահմաններում։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մայիսի։ Պետական բանկը կը վերցնէ մինչև նոր փոխութիւններ անելը հետեւեալ չափով տոկոս. տոկոսաբեր թղթերով տուած փոխառութեան համար 6 1/2%, յատուկ հաշիւների համար, որոնք ապահոված են տոկոսաբեր թղթերով 7 1/2%, փոխութիւնների և տոկոսաբեր թղթերով գեղջիւր համար 20% տարեկան, իսկ յորս-պրոցնիտական ներքին 1887 թվի փոխառութեան օրիգիններով տուած փոխառութեան տոկոսները, այլ և բանկի միւս օպերացիաների տոկոսների քանակութիւնը մնում է անփոփոխ։ Այսօր արտասահման է գնում երեք ամսով գերմանական դեսպան Դելչինցի։

ՓԱՐԻԶ, 20 մայիսի։ Արտաքին գործերի միջնորդ Գօրլէ, պատգամաւորների ժողովում պատասխանելով Տիւսայի ճառի վերաբերութեամբ եղած հարցապնդման, ասեց, որ Ֆրանսիան չէ կարող իրան վերաւորված համարել այն խորհրդից, որ տալիս է Տիւսան ռուսացիներին չը մասնակցելու Փարիզի ցուցահանդիսում. վերաւորական է ոչ թէ այդ խորհուրդը, այլ այն թէ Ֆրանսիական կառավարութիւնը չէ կարող ապահովանել իր հիւրերի դրութիւնը։ Վիեննայի Ֆրանսիական դեսպանը այդ առիթով քացատրութիւն ստացաւ կոմս Կալնոկից, որը ցաւակցութիւն արտայայտելով պատահածի վերաբերութեամբ, յայտնեց, որ ցանկանում է պահպանել տալ Ֆրանսիայի հետ ամենալաւ յարաբերութիւն. վերջում, այդ մտքի հետ միացաւ և Տիւսա Մի և նոյն ժամանակ Գօրլէ ասեց, որ Ֆրանսիան ներշնչված է խաղաղասիրական զգացմունքներով, որի ապացոյց կարող է լինել նոյն իսկ ցուցահանդէսը, և եթէ ում և իցէ կողմից միջոցներ ձեռք կառնվին, որոնք վնասակար կը լինեն Ֆրանսիայի շահերի համար, այն ժամանակ հեռու մնալով անօղտ տրտուներէրից, նա կարող կը լինի նոցա դիմադրել։

ԲԵՐԼԻՆ, 20 մայիսի։ Այսօր, առաւօտեան 10 1/4 ժամին, կայսրը և կայսրուհին, ուղևորութեամբ թագաժառանգի և Մեկենդի, Վէդէներ և Զօնէ բժիշկներին շողնաւով դնացին Պետալմի Իշխանաւոր-աղջիկները այնտեղ գնացին ձիերով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մայիսի։ Երէկ, Բարձրագոյն անձանց ներկայութեամբ, Բալտեան նաւակառուց գործարարով տեղի ունեցաւ «ՊԱՄՅԵ ԱՅՈՅԱ» նաւի հանդիսաւոր կերպով ջուր իջցնելը և կայսրական «Սոլառնա ՅեՅՅՅՅ» նաւի հիմնադրութիւնը։ Առաջին նաւի շինութիւնը սկսված է 1886 թվից։—Հրատարակված է միևնուրեքական մասնաժողովի հետեւեալ կարգադրութիւնը. թոյլ տալ որ երեք ամսով ընթացքում, յունիսի 1-ից, սահանաներում և ուրիշ հիմնարկութիւններում եղող լուցկիները վաճառվեն առանց բանդերով, այն պայմանով, որ եթէ լուցկիները կը լինեն մինչև 500 րուբլի ակցիդի քանակութեամբ, այն ժամանակ ակցիդ պէտք է վճարվի մինչև յունիսի 1-ը, այն պահանաներում, որտեղ կը լինի աւելի քան 500 րուբլու լուցկի, ակցիդային վերահսկող վարչութիւնն կողմից ակցիդը որոշելուց յետոյ, լուցկիի պաշարը պէտք է մտնի վերահսկողութեան տակ և ակցիդը պէտք է վճարվի լուցկիի դուրս թողնուց յետոյ. լուցկիների այն արկղեներ լրի, վերահսկող վարչութիւնը շտեմպել է դնում. մինչև սեպտեմբերի 1-ը, առևտրական հիմնարկութիւններում եղող բոլոր լուցկիներին, բացի նրանցից որոնք ընդունված են ակցիդային վերահսկող վարչութեան պահպանութեան ներքոյ, պէտք է կպցնվի բանդերով։ Առևտրական հիմնարկութիւններում մինչև յունիսի 1-ը եղած այն լուցկիները մնացորդները զեղջիւր, որոնք թոյլ-

տութիւն են ունեցել բաց թողնվելու առանց բանդերով կպցնելու, պէտք է ակցիդ վերցնել ոչ թէ արկղիկների քանակութեան, այլ արկղիկների մէջ եղած լուցկիների իսկական թիւին նայելով, հաշուելով 1/4 կօպէկ ամեն մի 75 հատի համար։—Հրատարակված է Ֆրանսիաների միևնուրեք հրահանգը լուցկիների ակցիդի և Փօսֆօրի վաճառման մասին։—Ժողովրդական լուսաւորութեան միևնուրեքները հերքում է լրագիրների հաղորդած լուրերը, որոնք վերաբերում են միևնուրեքեան ենթարկվող բարձրագոյն դպրոցներում և հիմնարկութիւններում նոր անձանց նշանակելուն և զանազան փոփոխութիւններին «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ դիւլաւտեստական յանձնաժողովը այն եղբայրականութեան եկաւ, որ անհրաժեշտ է այն կառավարութիւնը զեմստովների միջոցով կառուցանել էլ վկատորներ, ինչպէս նաւահանգիստներում, այնպէս և երկաթուղիների վրա։

ՎԻԵՆՆԱ, 21 մայիսի։ Տիւսայի ճառը այն մասին, թէ անյարմար է որ ռուսացացիք մասնակցեն Փարիզի ցուցահանդիսում, առաջ է բերում հարցապնդումներ ռուսացական սէյմում։ Ասում են, որ Վիեննայի Ֆրանսիական դեսպանը պէտք է հրաժարական տայ, որովհետև սիւալ կերպով հաղորդված է իր թէ Կալնոկի ցաւակցութիւն է յայտնել Տիւսայի ասածի վերաբերմամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մայիսի։ Թիֆլիսի և Գուլթա-իսի կառավարական բանկերի զրաւական թղթերը—98 ր., Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան օրիգինները—82 1/2 րուբլի։

ՓԱՐԻԶ, 22 մայիսի։ Բալտեմի կուսակից Լօրա ներկայացրեց պատգամաւորների ժողովին մի դեկլարացիոն, որով առաջարկում է հիւսիս-արեւելեան Ֆրանսիայում որոշել առանձին տարածութիւն, և ենթարկել այդ տարածութեան վրա բնակվող գերմանահպատակներին նոյնպիսի կարգադրութիւնների, ինչպիսի կարգադրութիւններ Գերմանիան անում է Էլզաս-Լօթարինգիայում, Ֆրանսա-հպատակների համար Գօրլէ ընդդիմացաւ այդ առաջարկութեան, որի անյոտաձգելի լինելը մերժված է 509 ձայների առաւելութեամբ ընդդէմ 7-ի։ Սահմանադրութեան վերաբնութեան վերաբերեալ յանձնաժողովում Ֆլօկէ յայտնեց, որ յոյս ունի սահմանադրութեան վերաբնութեան առաջարկը ներկայացնել սեպտեմբերին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիսի։ Պատգամաւորների ժողովին երէկ հարցապնդումներ ներկայացրին Ֆրանսիայի հետ ծագած տարաձայնութիւնների մասին Տիւսա յայտնեց, որ հարցապնդումներին կը պատասխանէ իր ժամանակին, և որ հէնց այժմ ինքն կարող է յայտարարել, որ բոլորովին մտադիր չէ եղել վերաւորել Ֆրանսիային։

ՎԻԵՆՆԱ, 22 մայիսի։ Թիւրքիայի Ֆրանսա-կան դրութիւնը յուսահատական է. օսմանեան բանկը հրաժարում է ավանանք տալու, հնարք չը կայ փող մատակարարելու բերդապահ գնդին և ռոճիկ տալու աստիճանաւորներին բայրաթի առիթով։ Մաուսը և ընկ. յայտնեցին, որ չեն յանձնի պատուիրած հրացանները մինչև չեն ստանայ փողերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիսի։ Երէկ Մօսկվա ուղևորվեցաւ ս. սինօդի օրէր-պօկուրօրը Բուլանու-Այրեսում, Արդէնտինեան հանրապետութեան մէջ, ռուսաց դեսպանի նախաձեռնութեամբ, կառուցված է ուղղափառ եկեղեցի։ Այդ եկեղեցու համար այս օրիւր քահանայ ձեռնադրվեցաւ հոգևոր ակադէմիայի կադիլդաւ խմբով, որը ակադէմիա էր մտել ծովային ուսումը վերջացնելուց յետոյ։ «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ պետական կառավարութիւնը միևնուրեքեան հրամանով կազմված է կապէղիցիան, ակադէմիկ Միդլենդօրֆի առաջնորդութեամբ, այս ամառ կուղևորվի Մա-լօրօսիա և Բէնարաբլա տաւարապահութիւնը այդտեղ ուսումնասիրելու նպատակով։

ՄՕՍԿՎԱ, 23 մայիսի։ Երէկ Մօսկվայում հիմը դրվեցաւ կենտրոնական էլէկտրական առաջին կայարանին։

ՓԱՐԻԶ, 23 մայիսի։ Այսօր գնեալով Բուլանթէ պատգամաւորների ժողովին կը ներկայացնէ մի առաջարկութիւն։ Լրագիրները պնդում են, որ այդ առաջարկութիւնը վերաբերվում է սահմանադրութեան վերաբնութեանը և պատգամաւորներ ժողովի լուծելուն Բուլանթէ կը պահանջէ, որ իր առաջարկութիւնը անյոտաձգելի ընտրութեանը ենթարկվի։

Մայիսի 20-ին

Կրտս.	Թղ.	Ազնւ.	բանկի	97	62
51/2%	զբաւակնի	Թղթեր	Խերսոնի		
	Կալուած	բանկի		99	37
6%	զբաւակ.	Թղ.	Խարկովի կալ. բան.	101	25
—	—	Պօլտաւայի	—	101	—
—	—	Պետ.Տուրակ.	—	101	—
—	—	Վիեննայի	—	101	—
—	—	Մոսկւայի	—	101	75
—	—	Բեսարաբ. Տաւր.	—	100	50
—	—	Նիշ.	Սամար.	101	—
—	—	Վիեննայի	—	101	—
—	—	Թիֆլիսի	—	27 և 43	—
—	—	Ռուսիայիսիւ.	18 և 43	—	—
Վ. օրժակօ-Կամսկի	բանկի	աշխատները	690	—	—
Ռուսաց	երկաթուղիների	կլիստ.	ընկ.	273	—
Ռիբինսկի	Վ. օրժակի	ընկ.	—	—	—
Ս. Պետսերտուրգի	քաղաքային	օրվ.	—	—	—
գաղխաներ.	—	—	94	62	—
Մոսկւայի	քաղաք.	օրվ.գաղխաններ	94	62	—
Օղէտայի	—	—	93	50	—
Թիֆլիսի	քաղաք.	կրեդ. ընկ.	—	—	—
Ս. Պետերբուրգի	բարոյայի	արամաղորտիներ	—	—	—
ամառը է:	—	—	—	—	—

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ՆԵՐՔԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի տե-
լփին համայնից, որ քաղաքային խորհրդարանը 29-ն սեպտեմբերի 1887 թ. 15
ի 1888 թվականների կայսրած վճիռներով կարգադրել է:

- ## ՄԻ ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ

որ սովորել է Գայանանան օրիորդաց դպրոցում, ցանկանում է դասեր ունենալ տներում կամ ուսումնարաններում: Հասցեն թողնել «Մշակի» խմբագրատանը: 2—4

ՊԱՐԿԱՍՏԱՆԻ ԹՆՋՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է մի վԱՐԺԱՊԵՏ, որը պէտք է աւանդէ հայոց լեզու, պատմութիւն, աշխարհագիտութիւն և բնազդիտութիւն: Պայմանները իմանալու համար դիմել ՎՅակի խմբագրատունը:

2-3

Իմ հրատարակութեամբ լոյս տեսաւ պ. Վասակ Մարգարեանցի (Նեադմի) «ՄԱՏՅԵՒ ԵՍԱԿԸ» անունով լոյրըլիւր. զինն է 25 կօպ., պահեստը գտնուում է ինձ մօտ. զիմէլ պայ հասցեով. Въ Ахалцыхъ, учителю арм. училищъ Нерсису Симонянцу. Գումարով գնողներին զեջումն կը լինի:

Ն. Սիմէօնեանց 2—2

ՖԻԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ

8 ըՈՒՐԸԻ ամսական, 4 դաս շաբաթական

Փարիզում աւարտած մի հայ երիտասարդ մօտերս Թիֆլիս հասնելով, գործնական և նոր մեթոդով ֆրանսերէն լեզուի դասեր է տալիս աշակերտներին տները այցելելով: Յանկացողները պիտի հաճեն զիմեւ „Մշակի“ լամբարդատան հասցէն իմանալու համար:

2—5

ՅՈՎՆԱՆԵՍԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՅՑԻ ԱՒԱՐՏԱԾ ՄԻ ՕՐԻՈՐԻ, որ մի քա-
նի տարի է արգէն ՎԱՐԺՈՒՀՈՒ ՊԱՇՏՏՈՆ Է ՎԱՐԵԼ, ցանկանում է դասեր ունենալ ըն-
տանիքներում, Թէ ԹԻՖԼԻՍՈՒՄ և Թէ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ: Կարող է պարապել փոքրահա-
սակ երեխաների հետ Ֆրեդեքիան սիստեմայով ևս: Համաձայն է նոյնպէս և քնտանիք-
ներում ապրել՝ երեխաներին դաստիարակելու համար: Հասցէն կարելի է իմանալ »Մը-
շակի« խմբագրատանը:

Զ—Է

2-5

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ԶՐԵՐԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցեբկոյնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ դետեկվում է Լուբո և ընկ. ապարանը):

Պատիւ ունեւ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ևս նորից վերանորոգեցին և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄՆ-ՆԱԿԱԿԻՅ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ Գործարանի կառավարութեան և յանձնելի ՖԱՐՄԱՍԻՍԵՒ ՄԻ ՊՐՈԿԻԶՈՐԻ, որ փորձառութիւն և ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում և Գործարանն ունի միջնորդ ձևի մըքերաներ, նայուէս և ջիվիտի հաշակաւոր ՖԻՏՐԻԼ, որը միակ է, որ աշդուլեթեալը մաքրում է ջրերը կապարից, իրից, բրկալից, օրջանական, սփրաքայական մասնիկներէջ ու աղբից և դերադանցում է բոլոր միւս ֆէրտիլիտից իր մըքերայական և ըմմիական գործողութեանը:

Փօլիտեքոն. Բաքու. 1917 թ. Դեկտեմբ. 11

Պրովոքորը մշտապես գտնվում է և անձամբ պարագլուսմ է իմ գործարանում։ Հեռերով այն օ-
ժանդակ միջոցներին, որ տալիս է դիտելով իմ անախյութական բնավայրի հիւղում, այսուհետեւ իմ
գործարանում կը պատրաստվեն, բացի գէտերեան, միզային և զգայուն ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼ-
ԱԿԱՆԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վէշիլի, Էմսի, Կարլսբադի, Մարիենբադի ջրերից, բու-
ժողական ջրերը բոլոր յայտնի աղբյւրների և այլն, հետեւեալով յայտնի հետազոտողներին տուած կա-
նոններին։ Արտաւտական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշա-
կարող բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունենալ մի քանի դե-
ղաւոր սպորտականութիւն։ Նրանք կարող են միշտ թափում դրու՞թեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա-
նակ պարտականելով իրանց մէջ ամբողջովն գործերի աւելի մեծ քանակութեամբ, այդպիսով աւելի ա-
խորժելի դառնալով խմելու համար և աւելի չուտ ներգործելով՝ հիւսնող կազմուածքի վրայ։

Աւելորդ չեմ համարում ասել, որ եմ միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք-
րութեան մէջ և վերաբերվել գէպի զորեւ ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին
յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Տարաճանութեաննից խառնուրդն համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածող-
ներին այդանքի՛ն որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի՝ ն չ'ան ա կ'ը, քանի որ ուրիշ
գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

20—50 (b)

ԴԷՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԵԲԵԼԻ

Ե. Ա. ԴԱՏՈՒՐԵԱՆՅՈՒՆ

ՄԵԶԻ-Փողոցի անկիւնում (երկրորդ տուն, զէպի աջ կողմ երևանեան հրապարակի), Նարինանովի տանը ԲԱՅԿԱՍԷ Է ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԵՍ ԿԵՐՈՍԻՆԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը տարբերվում է իր յատկութեամբ Թեֆլոնում մաս մաս ծախվող կերօսինից: Նա հոտ չունի և կատարելապէս անփոփոխ է:

ԳՆԵՐԸ ԶԱՓԱԻՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՏ ԲԱԳՈՒԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ:

Դռասների կողքից խաբերալուծիան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային՝ որ գտնւի է կերօսին առնելու, արժոււմ է մի ՄԱՐԿԱ „Е. А. Цатуровъ. Керосинъ“ գրութեամբ:

Առաջին պահեստը, ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ, Պալլոսկու բժշկարանի կող-
քին Արքունիի հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ
սուանձին գրքոյով և վճարել ամէն ամիս: 15--25 (7. Է.)

15--25 (2)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

L F O

ՊԱՆԴՈՒԽՏ

Գինն է 15 կօպէկ: Վաճառվում է ԲԱՐՈՒՆ՝ Տիգրան ՂՈՆԴԱՂԱՋԵԱՆԻ մօտ,
ՇՈՒՇԻ՝ Անդրէաս ԱՐԱՎԱՍԵԱՆԻ մօտ:

3—8

3—

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публикація Д-ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, in öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, in Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“,
или Tiflis, Redaction „Mschak“. (b)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մատները
փտելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ՝

Ճախվում է շեղաժամերում և դրոգիստների մոտ
 ինքուրային նշանաբանը քաղաքներում և կայարան-
 թեան թուրք քաղաքներում՝ ԳԼԽԻՈՐ ՊԱՆՏԵՍ
 գտնվում է ՎԱՐՃԱՎԱՅՈՒՄ, հնարարի, շեղաժաման
 տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐԱՆԵՍՍՈՒԿԻ
 մոտ, ԷՆԷԿՏՈՐԱՅԱՅԻ փողոց, № 39. Գալանտինին
 մեծ արիւղը արժէ վարչապաւույում 50 Կ., փոքրը
 30 կգ.

ՊԵՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու դործածութեան բացատրութիւնը և ֆարիզի ցուցահանդիսի մեղալնները:

2-10 (t)

«ԱՐԱՔՍԻ» ԵՐԿՐՈՐԻ ԳԻՐՔԸ, ՈՐԸ ՏՊԱՌՈՒՄ Է, ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԻ. ՈՒՆԱՅԻՆԱՅԻՐ
 ԲՈՒԹԵԱՆ ԵՐԹԻՐ, ՄԻՆՈՒՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՆՆԵՐ, ԳԱՐԺԱԿԱՆՈՒԹԻՆ, և այլն: Խա-
 բերդի ընդարձակ տեղեկագրու-թիւնը, Կիւիկիւ, Եւդոկիյ Կեանք: Եթէ Կեանագրու-թիւններ
 Տանգերձ ինն պատկերներով (կը մտենն Երեւն, Բաժճի): Ինն բանաստեղծու-թիւններ:
 Արքայ Լիւր, մի ձըրդու տանք, մի վէպ: Մատենախօսու-թիւն: Ազգային յիշատակարան:
 Հանգուցեալ մի յայտնի ազգային բանաստեղծի անտիպ գրուածքներէց մի քանիսը:
 Թղթակցու-թիւններ: Լրագրաց շուշը: Այլ և այլք: «Արաբի» բաժանորդագինն է 3
 Բուրլի: Հասցեն. Петербургъ Графскій переулочъ 7. 22. Симеону Гуламырянцу.